

## ԱՍՓՈՓՈՒՄ

Հայ ժողովրդական սզո երգերը դարերի ընթացքում ստեղծված ժողովրդական գեղարվեստական ստեղծագործություններ են: Ազերգողը մեծ ներշնչանք է ապրում, ողբերգական երևույթը և իր ապրումները ներկայացնում գեղարվեստական պատկերների և արտահայտչամիջոցների օգնությամբ, այդ իսկ պատճառով սզո երգերը կենցաղային ճանաչողական նշանակությունից գատ ձեռք են բերում արվեստի գործերի որակամիշ:

Որպես ժողովրդական րագմատարր, համադրական արվեստի մի մաս, սզո երգը առանձին վերցրած որոշ իմաստով թերի է և ամրողջանում է միայն ծեսի մեջ միանալով եղանակին, շարժ ու ձևին: Ծեսի ստեղծած համապատասխան տրամադրությունը, հանգամանքներն են ծնում այս երգերը, այլ հանգամանքներում դրանք նույն ձևով և բովանդակությամբ կատարվել չեն կարող. սա ծնում է գրառման դժվարություններ: Լանավանդ որ մի բան է, երբ գեղջկուհուց խնդրում ես վերերգել սիրո, աշխատանքի կամ հարսանեկան երգը, մի այլ բան, երբ առաջարկում ես կատարել հարագատի կորստյան առթիվ հյուսած ողբերգը՝ վիշտը վերապրելու գնով:

Հաշվի առնելով վերոհիշյալը, աշխատանքի 1-ին և 3-ը դրվում փորձել ենք սզո հնագույն և համեմատարար նոր երգերը ներկայացնել թաղման սովորությունների ողջ համակարգի շարակարգում:

Թաղման ծեսը պաշտամունքային-թովչական արարողություն է իր պաշտոնյաներով և ընդունված ծիսական կաղապարներով: Ծագելով հեթանոսական կրոնի նախահիմքի վրա, սզո ծեսը և երգերը չեն ընդունվել քրիստոնեության սպասավորների կողմից և պատմության ճանապարհին կորցրել են իրենց կոլորիտային

հանդերձները, ճոխությունը: Դարեր շարունակ մասնագետ կատարողներ ունենալը խոսում է ժանրի կարևորության և կայունության, նրա հանապազօրյա պահանջ լինելու մասին:

Ժողովրդի աշխարհայացքի էվոլյուցիայի հետ փոփոխվել են նաև սգածեսի արարողությունների ընդունումը ու տեսքը, պահպանելով, սակայն, իրենց էական բովանդակությունն ու նշանակությունը: Արխայիկ մտածողության կայուն շերտեր են պահպանվել սզո երգերում:

Հուզարկավորության ծեսի ընթացակարգում սզո երգերը ունենին և ունեն կարևոր դեր ու խնդիրներ.

ա. արտահայտել կատարվածի առթիվ՝ ցավ, վիշտ, հանգուցյալի հանդեպ՝ սեր, նվիրվածություն, ակսոսանք,

բ. գոհ ճանապարհել հանգուցյալի կենդանի հոգուն, հայտնել նրան այն ամեն լավը, ինչ չեն հասցրել կենդանության օրոք և ավելին՝ հրաժեշտի առթիվ,

գ. շարժել մահ առաջացնող ամենագոր ուժերի գուրջը և հանգուցյալին հանձնել նրանց խնամակալությանը,

դ. մխիթարվել և մխիթարել դիմացիներին,

ե. ներկաների մեջ ստեղծել հանգուցյալի անթերի, կատարյալ դրական կերպար, որպեսզի նա երկար և բարի հիշվի,

զ. փնտրել և գտնել առանց հանգուցյալի կյանքը շարունակելու կովաններ, նրա մահվան հետևանքով ստեղծված դատարկությունը լցնելու միջոցներ:

Սզո երգերում արտացոլված հայ ժողովրդական հիմնավոր հավատալիքները ենթակա են որոշակի համակարգման և շոշափում են կոնկրետ խորհրդանիշներ: Այդ տարբերակումները կատարել ենք աշխատանքի երկրորդ գլխում:

Սգո երգը բանահյուսական ամենաերկարակյաց ժանրն է, քանզի կապված է ժողովրդի կյանքի հավերժական, ամենօրյա երևոյթին՝ մահվանը: Գալով անհիշելի և անմատչելի ժամանակներից, այն կենցաղավարում է նաև այժմ, շարունակվում է երգաստեղծման գործընթացը: Սգո երգերի զարգացման հիմնական ուղղություններն են. 1. թատերային-հանդիսավորից պարզ-անմիջականի, 2. ավանդական-պատրաստիից հանպատրաստիի, 3. չափածոյից արծակի, 4. երգից ասերգի: Վերջապես, 5. փոխվել է կատարողական կազմը, պաշտոնյաները իբեց տեղը զիջել են հանգուցյալի հարազատներին:

Մահը մարդու կյանքի ամենաողբերգական երևույթն է, սգո երգերը քնարերգության ամենաթախծալի բաժինն են կազմում: Դբանք ունեն ժանրային իյստ տարբերակիչ առանձնահատկություններ, որոնք համախմբվում են հետևյալ էական ազդակների շուրջ. ա. ստեղծման եզակի առիթ՝ մարդկային կորուստ, բ. կյանքի և աշխարհի դիտարկում ողբերգական տեսանկյունից, գ. անսովոր բարձր ծայրերով և աղաղակներով պայմանավորված շիկացած դրամատիզմ, դ. հստակ մոտիվային հանգույցներ՝ գովք, սեր, խոհա-փիլիսոփայական խորհրդածություններ, կենցաղագրական շերտեր, ընկերային-հասարակական-քաղաքական երևույթների արծագանքներ, կառուտ, երաժեշտ և այլն, ե. զուտ դրական, անբասիր, հուզական, ոոմանտիկ երանգներով պաբուրված վիպաքնարական հերոս, գ. գեղարվեստական կանոնիկ առանձնահատկություններ:

Սգո երգերը, ինչքան էլ բազմաբնույթ և բազմաձև, ենթակա են որոշակի դասակարգման, որ փորձել ենք իրականացնել ըստ երեք կարգի տիպաբանական հիմունքների. I. ըստ սգո երգերի՝ թաղման ծեսի ընթացքի մեջ ունեցած տեղի և դերի (չորս տիպաբանական խումբ), II. ըստ սզացողի և հանգուցյալի ազգակցության (վեց խումբ), III. ըստ մահացածի մարդկային հատկանիշի, հասարակական-ընկերային ցուցանիշի (յոթ խումբ):

Ատենախոսության 4-րդ գլխում մանրամասն քննության ենթարկելով սգո երգերի ժանրային, մոտիվային կազմին և գեղարվեստական համակարգին վերաբերող բազմաթիվ հարցեր. եկել ենք այն եզրակացության, որ սգո երգերը հիմնականում բաղկացած են բովանդակային հետևյալ մասերից. մահը ժխտելու ցանկություն, սգի հրավեր, մահվան հանգամանքների նկարագրություն, առաջ եկած վշտի վերլուծություն, հանգուցյալի գովք. նբան ուղղված աղերս և դժգոհություն (որ նա հեռանում և իր հետ ապրողներից հազար ու մի արժեք է տանում՝ սեր, երազանքներ, նպատակներ, կապեր ու զգացմունքներ: Այս գիծը, ի դեպ, մեր բանահյուսության պատմության մեջ սկիզբ է առել Արտավազդ արքայորդուց), կյանքի վերջին շրջանում հանգուցյալի ասածի և արածի խորհրդավոր, սիմվոլիկ երանգներով պատում, երկրորդ կյանքի երևակայական նկարագրություններ, հանգուցյալի անունից պատվերներ ապրողներին, մահվան պատճառի, տեղի ու պահի պարսավանք և անեծք, հրաժեշտի խոսքեր և ապսպրանքներ, միոթարվելու հույս:

Սգածեսի ընթացքում ստեղծված հանգուցյալների կերպարները, միշտ դրական լինելով հանդերձ, տարրերակվում են մարդկային արժեքի չափանիշներով: Այս տարբերակումը կատարվում է ոչ միայն սգո երգերի օգնությամբ, այլև սզվորների շարժ ու ձևի, արարքների, ճիչերի, սգալու տևողության, քանակի, ուժգնության, անգամ հետագայում հիշատակի հարգման ձևերի, գերեզմանաքարի և տապանագրի միջոցով:

Սգո երգերը հիմնականում դիմում են հանգուցյալին, կամ վերջինս է դիմում որևէ հարագատի: Դրա համար էլ դրանք գերակշռող մեծամասնությամբ շարադրված են երկրորդ դեմքով: Առատ են ճարտասանական դիմուններն ու հարցերը, երկխոսությունները, կյանք և մահ ակնարկող խորհրդանիշները, ծայնարկություններն ու կոչականները, մարդկային տիտուր ապրումի և բնության թախծալի պատկերի գուգահեոները, համեմատությունները, անեծքները

և այլն: Սգո երգերի գեղարվեստական հյուսվածքը ենթակա է որոշ կանոնների, որը ենթադրում է ձևի և բովանդակության սահմանափակումներ:

Սգո ժխական երգերի մոտիվներով և գեղարվեստական ձևերով հյուսված մի շարք ժողովրդական մահերգեր ստեղծվել և կատարվել են ոչ թե հուղարկավորության ծեսի ժամանակ, այլ՝ թաղումից հետո: Սրանց անդրադարձել

ենք աշխատանքի 5-րդ գլխում՝ որպես արտածիսական սգո երգերի:

Հայ ժողովրդական սգո երգերի մասին առաջին տեղեկությունները, հաճախ ականա, հաղորդում են 5-րդ դարի հայ պատմիչները: Որպես այդպիսիք դրանք սկսեցին տպագրվել 19-րդ դարի երկրորդ կեսից մամուլում և տարրեր ժողովածուներում (Կ.Պոլիս, Թիֆլիս, Ս.Պետերբուրգ, Մոսկվա, Վենետիկ, Լոնդոն, Փարիզ, Հայեպ, Ջնյուոնիա, Տիֆլիս, Վառնա և այլուր):